

## ԿԱՆՈՆ ՊՍԱԿԻ

**Փեսայ եւ Հարս Եկեղեցւոյ ատեանին մէջ կը կանգնին կողք-կողքի, դէմքերը դէպի խորան:**

**Կ'օրնենք մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս. ամէն:**

Հայր մեր Երկնաւոր, սրբաբանուի՛ անունի: Թող զայ արքայութիւնի: Թող կատարուի՛ քու կամքդ, ինչպէս որ Երկինքի մէջ՝ այնպէս ալ Երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօ՛ր եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնապէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք, այլ մեզ Չարէն ազատէ՛: Որովհետեւ քո՛ւկդ են միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն:

**Սարկաւագը կը ձայնէ.**

Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ: Ընդունէ՛ մեր խնդրանքը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

**Քահանան կ'ըսէ.**

Օրհնութիւն եւ փառք տանք Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին, այժմ եւ միշտ եւ յախտեանս յախտենից. ամէն:

**Ապա հետեւեալ յորդորը կու տայ անոնց.**

**ԽՐԱՏ**

Տեսէ՛ք որդիներ,

Սուրբ Եկեղեցի Եկած էք՝ Աստուծոյ հրամանով եւ մեր սրբազն հայրապետներու հաստատած կանոններուն համաձայն պատկուելու՝ սուրբ ամուսնութեան համար: Մենք բոլորս կ'աղօթենք որ Աստուծ ձեզ միաբան սիրով պահէ. խոր ծերութեան հասցընէ եւ իր Երկնային անթառամ պատկին արժանացնէ:

Երկուքդ ալ շատ լաւ գիտէք, որ կեանքի մէջ կան տեսակ-տեսակ փորձութիւններ.- հիանդութիւն, ձախորդութիւն, աղքատութիւն եւ այլ դժբախտութիւններ: Մեր սրտազին աղօքքն է, որ Աստուծ ամէն տեսակի փորձութենէ հեռո՞ւ պահէ ձեզ: Բայց, Աստուծոյ կամքն է որ դուք Երկուքդ բոլո՞ր պարագաներուն, մանաւանդ նեղութեան եւ դժուարութիւններու մէջ, միշտ ըլլաք իրարու օգնական, տէր եւ պաշտպան, եւ հաւատարիմ մնաք իրարու՝ մինչեւ մահ:

**Ապա նախ փեսային կը հարցընէ.**

Որդեակ, կը խոստանա՞ս բոլոր պարագաներուն մէջ մինչեւ մահ տէր եւ պաշտպան ըլլալ այս օրիորդին, որ կինդ պիտի ըլլայ, եւ հաւատարմութեամբ սիրել զայն:

**Փեսան կը պատասխանէ.**

Այո՛, Հայր Սուրբ, կը խոստանամ՝ Աստուծոյ կամքով:

**Ապա Հարսին կը հարցընէ.**

Եւ դուն, որդեակ, կը խոստանա՞ս բոլոր պարագաներուն մէջ մինչեւ մահ տէր եւ հնագանդ ըլլալ այս պարոնին, որ ամուսինդ պիտի ըլլայ, եւ հաւատարմութեամբ սիրել զայն:

**Հարսը կը պատասխանէ.**

Այո՛, Հայր Սուրբ, կը խոստանամ՝ Աստուծոյ կամքով:

**Քահանան կը շարունակէ.**

Աստուած, որ իր աներեւոյթ ներկայութեամբ այս սուրբ տաճարը կը լեցնէ, այլեւ մեր պահապան հրեշտակները, այս սուրբ Եկեղեցին, սուրբ Խաչն ու սուրբ Աւետարանը, քահանայից դասը եւ հարսնեւոր այս ամբողջ բազմութիւնը ձեր խոստումին վկայ թող ըլլա՞ն:

**Փեսայ եւ Հարս կը պատասխանեն.**

Այո՛, Հայր Սուրբ, թող ըլլան:

**Քահանան.**

Աստուած ձեզի հետ ըլլայ եւ երբեք չսասանիք. օգնէ ձեզի Աստուած, այս պահէն սկսեալ մինչեւ վախճանը ձեր կեանքին:

**Վպա քահանան Հարսին աջ ձեռքը Փեսային աջ ձեռքը կու տայ, ըսելով.**

Երբ Աստուած Եւայի ձեռքը Աղամի աջ ձեռքը տուաւ, Աղամ ըսաւ. «Ահա ասիկա ուկորէս ու մարմնէս է. ասիկա կին պիտի կոչուի, որովհետեւ իր ամուսինէն առնուեցաւ»: Ահա այս պատճառով մարդը պիտի թողու իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուրը մէկ մարմին պիտի ըլլան: Հետեւաբար, Աստուծոյ միացուցածը մարդիկ թող չքածնեն:

## ՇԱՐԱԿԱՆ ԳԿ.

**Նայեա՛ ի մազ եւ ողբոմեա մազ Քրիստո. որ ոնիս բազո՞ւմ գլուխոթի՞ ն:**

**Մայր եւ կոյս աղախին Քրիստոսի որ բարեխօ՞ւ ագ եւ միշտ աշխարհի. քեզ երանմն առնայն աղի՞նք:**

**Յաղթո՞ղ եւ զնոր օրհնութին մշտ ի՛ բարձունս երգեստուք թագա՞ւ տրին Քրիստոսի հաւա՛ ասացեալ ժողովո՞ւ գոփ:**

**Նայէ եւ ողորմէ՛ մեզի, Քրիստոս, որովհելու բազմագուր ես:**

**[Ո՞վ Մարիամ], Քրիստոսի կոյս մայրն ու աղախինը, որ աշխարհի բարեկիուն ես միշտ. թոլոր ազգերը երանի՛ կու դան քեզի:**

**Յաղթական նոր օրհներգութիւն երգենք միշտ, հաւաղացեա՛ ժողովուրդ, բարձունքներուն մէջ նավող բազաւորին՝ Քրիստոսի:**

**Փա՛ռք Հօ՛ր և Որդուց եւ...:**

Այսօ՞ր եւ մեք տօնեացոք զնուա՛ր կատիս  
սուրբ Խաչին. եւ վո՞ր բիոլին մաստուցոք  
ժառու է սպասիւրականա՞ն:

**Փառք Հօր...: Այժմ եւ միշտ...:**

Այսօր մենք սուրբ Խաչի նաև ակապիքը  
կը փօնենք եւ յաէկի փառք ու պատիւ  
կը ննջանք Փրկիչին:

## ԱՊՈԹ-Ք

Ո՞վ Տէր, յախտենական Աստուած, դուն որ աքակտելիօրէն իրարու կը կապէս ու կը միացնես իրարու սահմանուած ամուրիները, օրինէ՛ քու այս ծառադ եւ աղախինդ, ինչպէս Խասհակն ուի Ուերեկան օրինեցիր՝ ցոյց տալով որ քու խոստումներուդ ժառանգորդներն են անոնք, եւ զիրենք բարեգործութեան առաջնորդէ, ողորմած եւ մարդասէր Տէր, մեր Աստուածը: Որովհետեւ քեզի՛ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յախտեանս յախտենից. ամէն:

**Մինչ Սարկաւագը կը ձայնէ, եկեղեցականներու դասը բեմ կը բարձրանայ, իսկ Փեսան ու Հարար Խաչեղբօր  
հետ միասին կը յառաջանան եւ կու գան բեմին առջեն, ուր կը կանգնին դէմքերը դէպի խորան դարձած:**

## ՃԱՄԱՄՈՒՏ

Խաղաղութիւն շնորհէ քու սուրբ Եկեղեցիիդ, ո՞վ Զրիասու, թշնամիներու յարձակումներուն դիմաց զայն խաղաղ ու անսասան պահէ, եւ ընդիանրական Եկեղեցին մէկ հաւատքի մէջ հաստատէ, որովհետեւ դո՞ւն ես մեր Տէրը եւ Աստուածը. փրկէ՛ մեզ:

## ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԱՐԱԿԱՆ ԳՁ.

**Ուստի մեր սուրբ Եկեղեցի, քանով  
Քրիստոս առքայն երկնից այսօր  
սպասակեաց լովեղ Խաչին խոռվ եւ  
զարդարեաց զարմարը քո պահնչելի  
փառոքն խոր վր:**

**Խընդայցժ գուստը Սինի, քանով երկիրը  
երկնիք եղեն այսօր վերըստին քո  
նորոգմամբ եւ թագաւորն երկնաւոր  
Համեցաւ բընակիլ իքէ զ:**

**Ուրախ եղիր, սուրբ եկեղեցի, որովհեկիւ  
Զրիակոս՝ երկինքի արքան այսօր քեզ իր  
խաչով պապէնց, եւ իր սքանչելի փառքով  
զարդարեց պարիսպներդ:**

**Սեծապէս ցնծա՛ Սինին աղջիկ  
(Երուսաղէմ). քու նորոգութեամբդ այսօր  
երկիրը երկինքի վերածուեցաւ,  
որովհեկիւ երկնաւոր քազաւորը  
հաճեցաւ քու մէջդ բնակիլ:**

**Փա՛ռք Հօ՛ր և Որդուց եւ...:**

**Ուստի իւ լեր բերկեա՛ Հարսնացեալ սուրբ  
Եկեղեցի, սպայծաւաց զննակունքս քո  
յօրհարանամին ծագոլին լուսով լսաց ի  
քեղ մայր Եկեղեցի՛:**

**Փառք Հօր...: Այժմ եւ միշտ...:**

**Ուրախացիր եւ քերկրէ՛, սուրբ Եկեղեցի,  
Զրիակոսի հարսը. պայծառացուր  
զաւակներդ, որպէսզի օրինեն քեզի լոյսի  
շող բերողը, ո՞վ մայր Եկեղեցի:**

**Սարկաւագը.**

Ուշադի՛ եղէք:

**Դայիրները երեք անգամ կ'երգեն.**

**Առ պր Ստուած, սուրբ եւ Հղոր, սուրբ եւ  
անհնահ, որ մարմնացար վասն մեր,  
ոլորմեա՛ մեզ:**

*Սուրբ Ասլուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ  
անհնահ, որ մեզի համար մարմնացար  
ողորմէ՛ մեզ:*

## **ՔԱՐՈՉ**

Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ:

*Ողորմէ՛ Տէր:*

Աշխարհի խաղաղութեան եւ սուրբ Եկեղեցւոյ հաստատութեան համար Տիրոջը  
աղաչենք:

Բոլոր սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսներուն համար Տիրոջը աղաչենք:

Մեր սրբազնագոյն հայրապետին՝ Տէր, Տէր (անուն) Կաթողիկոսի արեւշատութեան  
եւ հոգիին փրկութեան համար Տիրոջը աղաչենք:

*Ողորմէ՛ Տէր, Ողորմէ՛ Տէր, Ողորմէ՛ Տէր:*

## **Եւ Քահանան կ'ըսէ.**

Որովհետեւ ողորմած եւ մարդասէր ես, ով Տէր, մեր Ասուտածը, եւ քեզի կը վայելեն  
փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յափտեանս յափտենից. ամէն:

Սարկաւագի քարոզին հետ Փեսան ու Հարսը կը կանգնին իրարու դէմ յանդիման՝ գլուխ-գլխի, Խաչեղբայրը  
խաչը կը բռնէ անոնց գլխուն վերեւ:

## **ՀՆԹԵՐՅՈՒՄ**

Ալելուիա, Ալելուիա.

Տէր, քու օրինութեանդ բարիքներով ոխմատրեցիր թագաւորը եւ թանկագին քարերով  
թագ դրիր անոր գլխուն:

## **ԸՆԹԵՐՅՈՒՄ ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՓԵՍԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՍՎԿԵՆ** (5.22-33)

Զրիստոսի հանդէա ձեր պատկառանքը արտայայտեցէ՛ իրարու հնազանդելով:

Կինե՛ր, հնազանդեցէ՛ ձեր ամուսիններուն, ինչպէս Տիրոջ պիտի հնազանդէիք.  
որովհետեւ ամուսին մը իր կնոջ գլուխն է, այնպէս՝ ինչպէս Զրիստոս գլուխն է Եկեղեցին,  
իր մարմինին, որուն Փրկիչն է ինք: Հետեւարար, ինչպէս Եկեղեցին Զրիստոսի կը  
հնազանդի, այնպէս ալ կիները ամէն բանի մէջ իրենց ամուսիններուն թռղ հնազանդին:

Այրե՛ր, սիրեցէ՛ ձեր կիները այնպէս՝ ինչպէս Զրիստոս սիրեց Եկեղեցին եւ իր  
կեանքը տուաւ անոր համար, որպէսզի ջորի լուացումով զայն մաքրէ եւ իր խօսքով սրբէ,  
այնպէս մը՝ որ Եկեղեցին իրեն ներկայանայ ամբողջական փառքով, առանց ունէ արատի  
կամ խորշոնի կամ ուրիշ թերութեան, այլ՝ ըլլայ սուրբ եւ անարատ: Ծիշդ նոյն ձեւով,  
ամուսիններ պարտին իրենց կիները սիրել որպէս իրենց մարմինը. որովհետեւ իր կինը  
սիրողը իր սեփական մարմինը սիրած կ'ըլլայ, եւ չկայ մէկը որ իր մարմինը անտեսէ. ամէն  
մարդ ալ կը սնուցանէ եւ կը խնամէ իր մարմինը, ինչպէս Զրիստոս կը սնուցանէ եւ կը

խնամէ եկեղեցին՝ իր մարմինը, որուն անդամներն ենք բոլորս, անոր մարմինն ու ոսկորներէն: Սուրբ Գիրքին մէջ գրուած է. «**Ահա այս պատճառով այրը պիտի բողոք իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուոք մէկ մարմին պիտի բլլան»: Աստուծոյ ծրագրին կապուած կարեւոր ճշմարտութիւն մըն է ասիկա, որ ըստ իս՝ Քրիստոսի եւ եկեղեցին կը վերաբերի: Բայց նոյնը կը վերաբերի նաև ձեզմէ իրաքանչիրին, որովհետեւ իրաքանչիր այր պէտք է իր կինը սիրէ իր անձին պէս, եւ ամէն կին պէտք է յարգէ իր ամուսինը:**

### Ապա դպիրները կեղանակեն.

Ալելուիա, Ալելուիա.

Թագուիին քու աջիդ պիտի կանգնի՝ ոսկեկար հագուստներով զարդարուած ու պճնուած:

## ԱՒԵՏԱՐԱՆ

<b>Սարկաւագը.</b>	Ալելուիա, ոտքի՛:
<b>Քահանան.</b>	Խաղաղութի՛ւն բոլորին:
<b>Դպիրները.</b>	Նաեւ քու հոգիիդ:
<b>Սարկաւագը.</b>	Երկիւղածութեամբ լսեցէք:
<b>Քահանան.</b>	Յիսուս Քրիստոսի Աւետարանը, Մատթեոսի համաձայն: (19.3-6)
<b>Դպիրները.</b>	Փա՛ռք քեզի, ո՞վ Տէր, մեր Աստուածը:
<b>Սարկաւագը.</b>	Ուշադի՛ր եղէք:
<b>Դպիրները.</b>	Աստուած կը խօսի:
<b>Քահանան.</b>	Դրուագ՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի կեանքին:
Փարիսեցիներ Յիսուսը փորձելու մտադրութեամբ մօտեցան անոր եւ հարցուցին.	
- Մեր Օրէնքով մէկը իրաւունք ունի՞ ունէ պատճառով իր կինը արձակելու:	
Յիսուս անոնց պատախանեց.	
- Չէ՞ք կարդացած Սուրբ գիրքերուն մէջ, թէ Աստուած սկիզբէն «արու եւ էզ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ անոնց. « <b>Այս պատճառով այրը պիտի չգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուոք մէկ մարմին պիտի բլլան»</b> »: Հետեւարար այլեւս երկու չեն, այլ՝ մէկ մարմին: Ուրեմն ունէ մէկը թող չբաժնէ անոնք՝ որ Աստուած միացուց:	

## ՔԱՐՈԶ

Աղաչենք, որ Տէրը մեր քայլերը դէպի խաղաղութեան ճամբաները ուղղէ:

Ողորմէ՛, Տէր:

Աղաչենք, որ Տէրը մեզմէ վանէ շարին բոլոր խորհուրդները:

Աղաչենք, որ Տէրը մեզի առողջ խորհուրդներ եւ առաքինի կեանք մը պարգետէ:

Ողորմէ՛ Տէր, ողորմէ՛ Տէր, ողորմէ՛ Տէր:

## ԱՊՈԹՔ

Ո՞վ Տէր, երկնային զօրքերու Աստուած եւ բոլոր արարածներու Արարիչ: Գետնի փոշիէն առիր եւ մարդը ստեղծեցիր քու պատկերովի ու նմանութեամբ, եւ զայն դրիք դրախտին մէջ որ երանական կեանքն էր: Զանոնք արու եւ էզ ստեղծեցիր, եւ օրինեցիր ըսելով. «Աճեցէք, բազմացէք, երկիրը լեցուցէք եւ անոր տիրեցէք»:

Արդ, ինչպէս մեր նախահայրերուն ու նախամայրերուն ամուսնութիւնը օրինեցիր, եւ օրինեցիր քու բոլոր արդարներուդ պասկը, նոյնպէս օրինէ նաև քու ծառաներուդ

ամուսնական այս կապը, որովհետեւ դուն է որ զանոնք հասցուցիր այս քաղցր օրինութեան, եւ թանկագին քարերով քագ դրիր անոնց գլխուն:

**Այս հանգրուանին քահանան թագերը կը դնէ Փեսային ու Հարսին գլխուն: Գափիրները կ'երգեն:**

## ՇԱՐԱԿԱՆ ԳԿ.

**Թա՛ռ պարծանաց պաշակունեա՛ց  
կապմասլ առաքերական վարուք տեր  
դրիգորիս. յօրինեցար բաղմագոյն  
ականեք Հանդիսից նաևաստակութեան.  
վայելուչ պասակ հասեալ սուրբ  
եկեղեցա՛յ:**

Արշակունիներու պարծանքի քազը  
եղար քու առաքելական վարքով, ո՞վ  
Տէր Գրիգոր, քազ մը՝ որ կրած  
շարչարանքներուդ քազմագոյն  
ակերով զարդարուեցաւ, սուրբ  
Եկեղեցիին համար վայելու պասակ  
դառնալով:

**Ապա Քահանան կը շարունակէ Աղօթքը.**

Գալիլիայի Կանա քաղաքին մէջ տեղի ունեցող հարսանիքը օրինելով եւ աստուածաին իրաշքով ջուրը գինիի փոխելով՝ աստուածային փառք ցոյց տուիր աշակերտներուդ եւ ճանչուեցար որպէս Աստուած եւ մարդկութեան Փրկիչը: Ո՛չ միայն չմերժեցիր ամուսնութիւնը, այլ դուն ինքդ իբրեւ քահանայապետ օրնեցիր եւ ճշմարիտ խօսքով հաստատեցիր զայն, ըստով. «Աստուծոյ միացուցածը մարդիկ բող չբաժնեն»: Ահա թէ ինչու Առաքեալը կ'ըսէ. «Բոլորդ ալ ամուսնութիւնը պատուեցէք եւ ամուսնական անկողինը սուրբ պահեցէք»:

Ո՞վ Տէր, դուն որ սուրբ ես եւ սուրբերուն մէջ կը բնակիս, սուրբ պահէ ասոնց ամուսնական անկողինը եւ զանոնք քու պատուիրաններուդ լուծին տակ զուգելով միացուր, որպէսզի ա՛լ այսուհետեւ չնկատուին երկու, այլ մէկ մարմին՝ հնազանդութեամբ միացած, եւ զիրար սիրեն՝ պարկեշտ կենցաղով, անրիծ հոգիով, առանց ամօթի եւ առանց լկտիութեան, ամէն քարի գործերու պատրաստ ըլլալով: Որպէսզի զերծ մնան թշնամիին որոգայթներէն, եւ հրեշտակներուն եւ քու ամենայադր յաշիդ պահպանութեամբ՝ մնան առողջ, հոգիով եւ մարմնով:

Այո՛ Տէր, մեր Աստուածը, պաշտպան եւ ապաւէն եղիր քու ծառաներուդ՝ իրենց ամրող կեանքի ընթացքին: Զարանենազ խորհուրհներէ փրկէ՛ զիրենք եւ գիշեր ցերեկ քու ողորմութեամբդ պատսպարէ: Զանոնք քու եկեղեցիիդ մէջ տնկէ պտղալից ձիթենիի պէս, որպէսզի արդարութեամբ, սրբութեամբ եւ աստուածպաշտութեամբ ապրին, ինչպէս քու քարեսէր կամքիդ ցանկութիւնն է, արժանի ըլլան իրենց բոռները տեսնելու, եւ ըլլան քու ժողովուրդ՝ սուրբ անունիդ փառարանիշ, անդադար օրինելով ամենասուրբ Երրորդութիւնդ՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յախտեանս յախտենից, ամէն:

**Փեսան ու Հարսը կը նստեցնեն եւ հետեւեալ Շարականը կ'երգեն.**

## ՇԱՐԱԿԱՆ ԲԿ.

**Ով երանելիու ամենեցն՝ մատեղերական  
իշխանութեա՛մք ընկալար ի Քրիստոսէ՛  
ըզմագ պարծանաց. ով Արդար մեծ  
թագաւոր վազն մեր բարեխոսեա առ  
թագաւորն երկասաւ՛ր:**

Ով Արգար մէծ քազաւոր, դուն որ ամրողաշխարիի մէջ երանելի եղար  
եւ պարծանքի քազ սպացար  
Քրիստոսէն, մէզի համար քարեխոսէ՛  
երկնաւոր քազաւորին:

**Փառք Հօր...:**

**Ուստի և մեր հաստայեալքս տօնեմք  
զբոյ յիշառամբ, օրհնութին առաքելով՝ վ  
ըրքեղ պլասակողին. ոլ Տրդասու:**

**Փառք Հօր...: Այժմ եւ միշտ...:**

**Ովկ Տրդակը մեծ քազաւոր եւ Աշխելն  
մեծ քազուիի, մենք՝ հաւափա-  
ցեալներս չեր յիշաւրակը կը լունենք՝  
օրինութիւն երգելով չեզ պակողին.  
մեզի համար բարեհօսեցէք երկնա-  
ւոր Թազաւորին:**

Չարականի աւարտին Փեսան ու Հարսը կրկին կու գան բեմին առջեւ կը կանգնին իրարու դէմ յանդիման՝  
գլուխ-զլսի. Խաչեղբայրը խաչը կը բռնէ անոնց զլսուն վերեւ:

## ՔԱՐՈԶ

Աղաչենք որ Տէրը լսէ մեր ձայնը, ընդունի մեր սրտաբուխ խնդրանքները, ներէ մեր  
յանցանքները եւ ողորմի մեզի. մեր աղօքքներն ու խնդրանքները միշտ հասնին իրեն՝ մեր  
մեծ Տիրոց. եւ ինք մեզ արժանի ընէ միասնաբար, մէկ հաւատքով եւ բարի գործերով  
աշխատելու արդարութեան համար: Խնդրենք որ ողորմի եւ իր շնորհքը տայ մեզի:  
Ամենակալ Տէր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Ողորմէ՛ Տէր, ողորմէ՛ Տէր, ողորմէ՛ Տէր:

## ԱՊՈԹՔ

Ո՞վ Տէր, մեր Աստուածը, որ միշտ մեզի հետ ես եւ բնաւ չես լքեր անոնք՝ որոնք  
ճշմարտութեամբ քու սուրբ անունդ կը խոստովանին: Կաղաչենք, կը պաղատինք քեզի եւ  
կը խնդրենք, մարդասէր Տէր, քու հրամանովդ օրինեցինք այս զոյգին ամուսնական կապը՝  
քու սուրբ տաճարիդ մէջ, այս սուրբ Սեղանին առջեւ: Եւ հիմա, բարերար Տէր, քու  
հրամանովդ իրենց զլսէն կը հանենք պսակի նարօսները, եւ զիրենք սուրբ Խաչիդ  
նշանովը կօրինենք:

**Այստեղ Քահանան Փեսային ու Հարսին զլսէն կը վերցնէ. բագերը եւ Խաչեղբօր խաչը կառնէ: Բոլորը  
միասին դէպի խորան կը դառնան, մինչ աղօքքը կը շարունակուի:**

Բարի աչքդ միշտ իրենց վրայ բռող ըլլայ, ո՞վ Տէր. քու խաղաղութեան իրեշտակդ  
դրկէ, որպէսզի զիրենք պահէ սուրբ եւ անարատ, միաշունչ եւ միախորհուրդ: Նաեւ  
զաւակներ շնորհէ իրենց, Տէ՛ր, ինչպէս որ դո՛ն կուզես: Ջու առատ բարերարութեամբ  
քաղցրացնիր անոնց կեանքի վայելքը, որպէսզի անքիծ եւ անարատ վարքով ապրին այս  
աշխարհի մէջ, մինչեւ խոր ծերութիւն հասնին, եւ արժանի ըլլան երկինքի արքայութեամն  
եւ անթառամ պսակին:

**Ապա Քահանան բաժակ մը զինի կառնէ եւ հետեւեալ աղօքքը կընէ.**

## ԱՊՈԹՔ

Ո՞վ Տէր, մեր Աստուածը, դուն որ ամէն ինչ իմաստութեամբ ըրիր, որոշ նպատակով  
հաստատեցիր տիեզերքը եւ նոյն նպատակով պատուեցիր Գալիլիայի Կանա քաղաքին  
մէջ տեղի ունեցող հարսանիքը, այս պահուն դուն ինքդ քու ողորմութեամբ օրինէ. նաեւ

այս բաժակը. Եւ մենք միշտ գոհութիւն պիտի յայտնենք պարզեւներուդ համար, օրինութիւն եւ փառք տալով Հօրը, Որովհին եւ Սուրբ Հոգիին. ամէն:

**Ապա բաժակը կու տայ անոնց:**

## **ՔԱՐՈԶ**

Սուրբ Խաչին ապահնելով աղաչենք, որ Տէրը անոզ ազատէ մեզ մեր մեղքերէն եւ իր ողորմութեամբը փրկէ: Ամենակալ Տէր, մեր Աստուածը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

## **ԱՊՈԹ-Ք**

Քրիստոս, մեր Աստուածը, որ քեզի հաւատացողներուն պահապանն ես եւ յոյսը, սուրբ եւ պատուական Խաչի հովանիին տակ՝ խաղաղութեան մէջ պահէ ու պահպանէ եւ օրինէ՛ նորապսակ այս ամոլը, անոնց Խաչեղբայրը, ծնողներն ու պարագաները եւ քու հաւատացեալ ժողովուրդդ: Փրկէ՛ երեւելի եւ աներեւոյթ թշնամիներէն, եւ արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու քեզ, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յափառեանս յափառենից. ամէն:

**Ապա Տէրունական աղօքքը կ'երգեն.**

Կ'օրնենք մեր Տէրը՝ Յիսոս Քրիստոս. ամէն:

Հայր մեր երկնատոր, սրբաբանուի՛ անունդ: Թող գա՛յ արքայութիւնդ: Թող կատարուի՛ քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօ՛ր եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնապէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք, այլ մեզ Չարէն ազատէ՛: Որովհետեւ քո՛ւկդ են միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն: